ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2009 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 5-Ի N 287-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Առևտրի և ծառայությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 3.1-ին և 7-րդ հոդվածներով, «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասով, ինչպես նաև «Պետական սահմանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածով և Հայաստանի Հանրապետության մաքսային օրենսգրքի 140-րդ հոդվածի 2-րդ մասով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ում է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի մարտի 5-ի «Առևտրի իրականացման վայրի կազմակերպման գործունեության լիցենզավորման կարգը, լիցենզիայի ձևը և լիցենզիա ստացած անձանց կողմից լիցենզավորող մարմին ներկայացվող հաշվետվության և առևտրի իրականացման վայրի կազմակերպման գործունեության լիցենզիա ստանալու հայտին կից ներկայացվող հայտարարության ձևերը հաստատելու մասին» N 287-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգում կատարել հետևյալ լրացումները և փոփոխությունները՝

1) 7-րդ կետում՝

ա. 1-ին ենթակետի «ա» պարբերությունը «ձևը,» բառից հետո լրացնել «պետական գրանցման համարը, հեռախոսահամարը» իսկ «ազգանունը» բառից հետո՝ «պետական հաշվառման համարը, հեռախոսահամարը» բառերով,

բ. ուժը կորցրած ճանաչել «գ» ենթակետը,

գ. 5-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«5) «Պետական սահմանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան սահմանային շերտում կազմակերպվող առևտրի իրականացման վայրի համար՝ ոստիկանության և ազգային անվտանգության բնագավառների պետական լիազորված մարմինների համաձայնության և վերադաս մաքսային մարմնի եզրակացության հիման վրա սահմանապահ զորքերի կողմից տրված թույլտվության պատճենը.».

2) 8-րդ կետում «5-րդ» թիվը փոխարինել «7-րդ» թվով, իսկ «2-րդ ձևի» բառերը՝ «N 4 հավելվածի» բառերով.

3) լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր պարբերությամբ.

«Պետական սահմանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան սահմանային շերտում գործող առևտրի իրականացման վայրի համար՝ կազմակերպիչ հանդիսացող հայտատուն ներկայացնում է նաև ոստիկանության և ազգային անվտանգության բնագավառների պետական լիազորված մարմինների համաձայնության և վերադաս մաքսային մարմնի եզրակացության հիման վրա սահմանապահ զորքերի կողմից տրված թույլտվության պատճենը:».

4) 10-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«10. Առևտրի իրականացման վայրի կազմակերպման լիցենզիա ստանալու համար անհրաժեշտ փաստաթղթերը կարող են լիցենզավորող մարմնին հանձնվել առձեռն, փոստով

կամ էլեկտրոնային եղանակով (էլեկտրոնային հասցեն՝ secretariat@mineconomy.am), ինչպես նաև հայտատուի ցանկությամբ՝ էլեկտրոնային համակարգի միջոցով (www.e-gov.am/licenses):».

5) 11-րդ կետը «Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով» բառերից հետո լրացնել «իսկ սահմանային շերտում գործող կամ կազմակերպվող առևտրի իրականացման վայրի համար՝ ոստիկանության և ազգային անվտանգության բնագավառների պետական լիազորված մարմինների համաձայնության և վերադաս մաքսային մարմնի եզրակացության հիման վրա սահմանապահ զորքերի կողմից տրված թույլտվության պատճենը» բառերով.

6) 12-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետերից հանել «և կատարված են սույն կարգի 11-րդ կետում նշված պահանջները» բառերը.

7) 20-րդ կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 2.1-ին ենթակետով.

«2.1) ապահովել «Պետական սահմանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջների կատարումը.».

8) N 1 ձևը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Ձև N 1

ՀԱՅՏ

ԱՌԵՎՏՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՎԱՅՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԼԻՑԵՆԶԻԱ ՍՏԱՆԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայտատու _____
(իրավաբանական անձի անվանումը, կազմակերպական-իրավական ձևը և հեռախոսահամարը, անհատ ձեռնարկատիրոջ անունը, ազգանունը և հեռախոսահամարը)

Գտնվելու վայրը _____
(իրավաբանական անձի գտնվելու վայրը, անհատ ձեռնարկատիրոջ բնակության վայրը)

Գործունեության իրականացման վայրը և հեռախոսահամարը _____
_____

Լիցենզավորման ենթակա գործունեության տեսակը _____

_____

(լիցենզավորման ենթակա առևտրի իրականացման վայրի տեսակը)

Իրավաբանական անձի պետական գրանցման համարը կամ անհատ ձեռնարկատիրոջ պետական հաշվառման համարը _____

Խնդրում եմ տրամադրել լիցենզիա՝ առևտրի իրականացման վայրի կազմակերպման գործունեության համար:

Հայտին կից ներկայացնում եմ հետևյալ փաստաթղթերը՝

1) առևտրի իրականացման վայրի տարածքի սեփականության կամ վարձակալության կամ օգտագործման իրավունքների պետական գրանցման վկայականի պատճենը.

2) առևտրի իրականացման վայրի վաճառատեղերի և այլ անհրաժեշտ կառույցների տեղաբաշխման սխեման՝_____ էջ.

3) *առևտրի իրականացման վայրի վաճառատեղերի (այդ թվում՝ առևտրի օբյեկտների) (այսուհետ՝ վաճառատեղեր) և վաճառողների մասին հայտարարություն՝_____էջ.

4) պետական տուրքի վճարման անդորրագրի բնօրինակը.

5) ** Հայաստանի Հանրապետության ոստիկանության և ազգային անվտանգության բնագավառների պետական լիազորված մարմինների համաձայնության և վերադաս մաքսային մարմնի եզրակացության հիման վրա սահմանապահ զորքերի կողմից տրված թույլտվության պատճենը:

Հայտնում եմ, որ՝

1) Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի մարտի 5-ի «Առևտրի իրականացման վայրի կազմակերպման գործունեության լիցենզավորման կարգը, լիցենզիայի ձևը և լիցենզիա ստացած անձանց կողմից լիցենզավորող մարմին ներկայացվող հաշվետվության և առևտրի իրականացման վայրի կազմակերպման գործունեության լիցենզիա ստանալու հայտին կից ներկայացվող հայտարարության ձևերը հաստատելու մասին» N 287-Ն որոշման N 1 հավելվածի 20-րդ կետում նշված՝ Հայաստանի Հանրապետության օրենքներով և լիցենզավորման կարգով նախատեսված՝ առևտրի իրականացման վայրին ու առևտրի իրականացման վայրի կազմակերպչին ներկայացվող պարտադիր պահանջները կատարված են.

*Հայտարարությունը ներկայացնում են միայն կազմակերպիչ հանդիսացող հայտատուները:

** Ներկայացնում են միայն Հայաստանի Հանրապետության սահմանային շերտում առևտրի իրականացման վայրի գործունեություն կազմակերպող կամ կազմակերպիչ հանդիսացող հայտատուները:

2) լիցենզավորող մարմին ներկայացված փաստաթղթերում առկա տվյալներն ամբողջական են և հավաստի:

Հայտատու _____ _____
(պաշտոնը, անունը, ազգանունը) (ստորագրությունը)

_____ _____ 20 թ.»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից, իսկ Հայաստանի Հանրապետության սահմանային շերտում գործող առևտրի իրականացման վայրի կազմակերպման գործունեության համար սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից 6 ամիս հետո: